*ԵՐԵՎԱՆԻ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ անվան հ2 հիմնական դպրոց (ՊՈԱԿ)*

# «Դպրոցի երգիչներ» խմբակի 2023-2024 ուստարվա տարեկան պլան-ծրագիր

Խմբավար՝ Կարինե Ստեփանյան

ԵՐԵՎԱՆ 2023թ.

## Նկարագրություն

**«Երգչախումբ» խմբակի ծրագիր**։ Խմբակի ծրագրում առանձնացված է որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրությունների, հետաքրքրասիրությունների ու պահանջմունքների բավարարմանը։ Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, երգացանկը (կոմպոզիտոր, խոսքի հեղինակ), նպատակը, խնդիրները, ակնկալվող վերջնարդյունքները՝ շեշտը դրված է սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների զարգացման վրա։

Ծրագրի վերջում նշվում է գրակավության ցանկը։

Երգչախմբի գեղարվեստական և մանկավարժական նշանակությունն այն է, որպեսզի օգնի սովորողներին հասկանալ երաժշտության բնույթը, բովանդակությունը, արտահայտի զգացմունքները երգի, խմբերգի միջոցով։ Ուսուցչի նպատակն է խմբերգային երգեցողություն սովորեցնելն է և երեխաների մեջ երաժշտության նկատմամբ սեր արթնացնելը, որն էլ նպաստում է խորացնելու երեխաների մեջ սերը հայրենիքի, իր ժողովրդի ու ազգի նկատմամբ։

Երգչախմբային արվեստը ձևավորում է սովորողների մոտ ճիշտ մտածողություն, զարգացնում է լսողությունը, կողքինին լսելու և զուգահեռ ինքն իր թեման ճիշտ կատարելու կարողություն, երաժշտական ճաշակ, երաժշտական մշակույթի ձևավորում և երգերի տարածում։ Խմբային երգեցողությունը զարգացնում է նաև մի շարք բարոյական արժեքներ՝ բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն, միասնականություն, մեկը մյուսին լսելու, սեփական պարտականությունների նկատմամբ պատասխանատու վերաբերմունք դրսևորելու կարողություն։

## Նպատակներ

1. Զևավորել և զարգացնել ճիշտ երգեցողության կանոններով երգելու կարողություն։2 Զևավորել և զարգացնել ճիշտ ձայնի դրվածք, շնչառություն, բառերի հստակ արտասանություն, մաքուր ինտոնացիա։

3. Զևավորել և զարգավնել մաքուր ինտոնացիայով միաձայն և երկձայն երգելու կարողություն, անսամբլային զգացողություն։

4. Զևավորել և զարգացնել երաժշտական ստեղծագործության իմաստն արտահայտող հասկացության մասին։

5. Զևավորել և զարգացնել երգի տրամադրությունը, բնույթը ռիթմական կամ փոքրիկ պարային շարժումներով ներկայացնելու կարողություն և հմտություն։

6. Զևավորել և զարգացնել երաժշտական արտահայտչամիջոցների մասին պատկերացումներ և գիտելիքներ։

7. Զևավորել և զարգացնել երգի մեջ արտահայտչամիջոցները զգալու, ընկալելու և ներկայացնելու հմտություններ։

8. Արժևորել երգի մեջ արտահայտչամիջոցների դերը։

9. Տարբերել հայ և այլ ազգերի դասական, ժողովրդական երգերի արտահայտչամիջոցների բազմազանությունը։

## Խնդիրները

Երաժշտական լսողության, ունակությունների զարգացում, ինտոնացիոն մաքուր երգեցողություն, երաժշտական գրագիտություն, երաժշտական ճաշակի ձևավորում: Անսամբլային կատարման հմտություն, ցուցաբերի հուզական արձագանք, իր հույզերն ու ապրումներն արտահայտելու կարողություն:

## Վերջնարդյունքները

Ծրագրի ավարտին աշակերտը կկարողանա՝

- Տարբարել և կատարել ժամանակակից, դասական և ժողովրդական երգերը
- Զարգացնել ինտոնացիոն մաքուր երգեցողություն,
- Զարգացնել երաժշտական ունակությունները
- Կատարել ունիսոն երգեցողություն
- Յուրացնել անսամբլային կատարումը
- Տիրապետել վոկալ երգեցողությանը՝

-ձայնի դրվածքին

-շնչառությանը,

-երաժշտական լսողությանը

-երաժշտական հիշողությանը

-երգի կատարողական գրագիտությանը և կուլտուրայի մշակում, երգի կերպարային զգացողությանը

-սեր և հարգանք հայրենիքի և մշակույթի նկատմամբ,

-ընկալել աշխարհի տարբեր ժողովուրդների գեղարվեստական մշակույթը և գիտակցել տարբեր ազգերի մշակույթի կարևորությունը,

-տիրապետել P-ից անցում MF և հակառակը

## Օգտագործված գրականության ցանկ


1. Դասագիրք 4-րդ դասարան «Երաժշտություն» առարկայի /Յ. Յուզբաշյան, Ա. Փահլևանյան, Ա. Լուսինյան, «Զանգակ» հրատարակչություն, 2020թ., 96 էջ։

2. Հայ կոմպոզիտորներ, տարբեր հրատարակչություններից։

3. Մանուկների մոլորակ։Մանկական երգերի ժողովածու /Զ. Սարիբեկյան, «Զանգակ» հրատարակչություն, 2023թ., 96 էջ։

4. Մուլտիմեդիաներ

5. Школа хорового пения/ Соколов В. (сост.), Попов В., Абелян Л., 1987. — 161 с.

6. Начальный этап обучения хоровому пению/ Жарова Л.М., 2011г.

**Աշակերտների թիվը 12-25**

**Տարրական դպրոց – 68 ժամ**

**Շաբաթական 2 ժամ**

| | Թեմաների անվանում | Ժամաքանակ |
|---|---|---|
| 1. | «Ջան Երևան»/ խոսք՝ Հովի. Ղուկասյանի, երաժշտ.՝ Արտեմի Այվազյանի | 6 |
| 2. | «Ազգ փառապանծ»/ խոսք՝ Աշոտ Գրաշու, երաժշտություն՝ Առնո Բաբաջանյանի | 6 |
| 3. | «Հեքիաթային ճանապարհ»/ խոսք՝ Ս. Մուրադյան, երաժշտություն՝ Մ. Վարդանյանի | 6 |
| 4. | «Սարդարապատ»/ խոսք՝ Պ. Սևակ, երաժշտություն՝Է. Հովհաննիսյանի | 6 |
| 5. | Ժող. երգեր մշ. Կոմիտասի «Ջան լե՛,լե՛», «Իլիլի դիլիլի», «», «Փափուռի» | 6 |
| 6. | «Շախ և մատ»/ խոսք՝ Ա. Բարսեղյան, երաժշտություն՝Ռ. Սարգսյանի | 6 |
| 7. | «Իմ տատիկը»/ խոսք և երաժշտություն՝Զ. Սարիբեկյան | 6 |
| 8. | «Իմ մայրիկը»/ խոսք և երաժշտություն՝Զ. Սարիբեկյան | 6 |
| 9. | «Զատիկն ու թիթեռը»/ խոսք և երաժշտություն՝Զ. Սարիբեկյան | 6 |
| 10. | «Հեքիաթների գիրք»/ խոսք և երաժշտություն՝Զ. Սարիբեկյան | 5 |
| 11. | «Հեքիաթների գիրք»/ խոսք և երաժշտություն՝Զ. Սարիբեկյան | 5 |
| 12. | Երգերի ամփոփում, ամրապնդում | 4 |